

րին ուսուցիչ նշանակելը աժան լինելուն արդեօք թէ ուրիշ նպատակի համար էր), Համեմատած Ատորպատականի միւս գաւառներին՝ Սալմաստցիք բաւական կրօնասէր են: Տիւրասէր վերին ստիճանի, գաղթականներն և հալածականներ ամենից աւելի այստեղ խնամուած են: մինչև այսօր Թաւրիզից և շրջակայքից գաղթականները փախչում են Սալմաստ գնալու համար:

Անցեալ 97 թուին Սալմաստում և սահմանադիւրի վրայ կատարուած մի կարգ անխոհեմ շարժումները Օսմ. և Պարսից պետութեանց մէջ բարդութիւններ յառաջ բերին. պարսիկ կառավարութիւնը ստիպուեցաւ խիստ միջոցների գիմել և այդ պատճառաւ ժողովուրդը չափազանց վնասուեցաւ: խուզարկութիւններ տեղի ունեցան, բայց Ազգ. իշխանութեան ազդու միջամտութեամբ հայերի համար անվնաս անցաւ և կառավարութիւնը զգալով որ խարուել է՝ իր վստահութիւնը վերահաստատեց: Առկասի հայ թերթների մէջ այդ ժառին երեցած թղթակցութիւնները զարմանք միայն պատճառեցին տեղացիներին, քանի որ իրողութիւնները խեղաթիւրուած և զրպարտութիւններով համեմուած էին: Պարսիկ կառավարութիւնը միշտ բարեացակամ է եղած զէպի հայերը. փոթորիկներ թէև երբեմն վրդովել են խաղաղութիւնը, բայց կրթութեամբ Առաջնորդը ազդուապէս պաշտպան է կանգնել, կարողացել է կառավարութեան տրամադրութիւնը փոխել և զրպարտիչներին խայտառակել:

Ատրպատականի Առաջնորդը լոկ մի հոգեւոր գլուխ չէ իր հօտին, նա կառավարութեան հետ անդադար բանակցութեան մէջ է լինում ժողովրդի իրաւունքները պաշտպանելու, գատեր տեսնելու՝ գրեթէ մի հիւպատոսի ազդեցութիւն և պատիւ ունի. հայալեւանի գաւառներին սարփորաստ նշանակելու, վնասակար պաշտօնեաներ փոխել տալու մէջ Առաջնորդի ձայնը ահագին կշիռ ունի:

Սալմաստի գիւղերի մեծ մասը աղաների սեպահանութիւնն է, Հաֆթիւն և Ղալասար միայն գիւղացիներից գնուած:

Աղաները ստանում են երկրագործութեան արդիւնքի 8-ից 1-ը, բայց ընդհանրապէս 3-ից 1-ը, միւս տուրքերը համեմատած Ռ. թիոյ գիւղօրէից թեթեւ են: Այս գաւառը տնտեսապէս բաւական ապահովուած կարելի է համարել, Սալմաստցիներից հարուստ փաճառականներ կան Ղալասար և Փայաճուկ գիւղերում: ընդհանուրի ապրուստի միջոցը պանդխտութիւնն է, դժբախտաբար վերջերս սկսել են ընտանիքներն ևս փոխադրել, մանաւանդ Սարի գիւղացիները մեծաւ մասամբ Ռոստով են փոխադրուած, կանայք և երեխաներ միայն և 10-15 ծերունի կարելի է տեսնել այս գիւղում: Միւս գիւղերում միջին հաշուով տան զլուխ մի պանդուխտ կայ:


1896-ի վիճակագրութեան համեմատ 1488 պանդուխտ կար, այնուհետեւ շատացել է:

Պանդխտաւայրը միայն Ռուսաստանն է, ուր զբաղուում են առեւտրով և մշակութեամբ, Սալմաստի հայերը գրեթէ արուեստ չգիտեն, կտուներկելը (շիլէճի) հայերի միակ արուեստն էր որով շատ տուններ զբաղուում էին: շիլէն արտահանում էր Ալէքսանդրապոլի, Ղարսի, Երևանի նահանգները և մեծ սպառում ունէր Պարսկաստանում: բայց ուսական շիլերը սրա դէմն առանձնաբոլջ Սալմաստում միայն մի տուն այժմ այդ գործով է զբաղուում, Հաֆթիւնում կան դարբիններ, որ լաւ արհեստաւորներ են համարուում ծածկաստանում ևս, Բացուելիք Կենտրոնական վարժարանը, եթէ ունենայ նաև արհեստից բաժին՝ պանդխտութիւնը կէս առ կէս կարող է պակսեցնել:

Հայ կանայք ծոյլ և առանին գործերի անվարժ են, նոյն խի գուլթայ հիւսել չգիտեն: Բարոյականութիւնը կարելի է միջակ համարել, պանդխտութեան արգիւնքն է այս ի հարկէ, տղամարդկանց շատերը Ռուսաստանից փոխադր են վերադառնում և տեղացիների առողջութիւնը խանգարում:

Ամուսնութիւնը վաղածամ է կատարուում, 12—14 տարեկան ազգիկն արդէն հասած է, 16—18 տարեկանը պատաւած, երկտասարգն ամուսնանում է 12—24 տարեկան, Մերձաւոր ամուսնութիւններ յաճախ են պատահում, Առաջնորդական տուրքերը բաւական յօժարութեամբ վճարում են, Թաւրիզի Առաջին Սալմաստից ստանում է 240 ո. պտղի, նոյնչափ և պսակահարկ, հոգեբաժին ելն: Փոխադրարանը Հաֆթիւնումն է, 4 տարի առաջ յանկարծ ստորերկրեայ ջրերը բարձրանալով շատ տներ քանդեցին, ընդ որս և փոխանորդարանը, եթէ շարունակուի այդպէս՝ բիշ ժամանակից այդ գիւղը անրնակելի պիտի դառնայ, նոյն երեղիթը նկատուում է նաև միւս գիւղերում:

(Կր շարունակուի)



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

ՕՏԱՐԱԶԳԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՅ.

Մանկավարժութեան գրականութիւնը այնպէս է ստուարացել, որ այդ ճիւղի ամէն

մի նոր գրուածք՝ շատ անգամ հին ասած-
ների կրկնութեան տպաւորութիւն է թող-
նում: Իսկ հոգեքանութիւնը, քարոյական փի-
լիսոփայութիւնը, կենսաքանութիւնը, ընկերա-
կան գիտութիւնը, որոնք որ օժանդակ մա-
կացութիւններ են մանկավարժութեան հա-
մար, այնքան առաջ են գնում, որ նոր հո-
րիզոններ են քանում մանկավարժութեան
համար: Այժմ հարկաւ կը կարդացուին առա-
ւելապէս այն մանկավարժութիւնները, որոնք
հին խնդիրները պայծառացնում են այդպիսի
նոր լոյսերով: Ցանկալի է, որ եւ մեր գրա-
կանութիւնը շատ ու քիչ խնամուտ լինի ժա-
մանակակից հայեցողութեան, ուստի եւ մեր
հրատարակիչների ու թարգմանիչների ուշա-
դրութիւնը դարձնում ենք արդի մանկավար-
ժութեան մի երկու հեղինակութիւնների վե-
րայ, որոնք խիստ մեծ համակրութիւն են
վայելում ոչ միայն իւրեանց հայրենիքում,
այլ եւ դուրսը: Այդպէս են.

Jeunesse {
և
Vaillance } Քրանսիացի վագների

և Wie erziehen wir unsern Benjamin? գերմա-
նացի Մատթիասի:

Մենք մեր կողմից ըստական կը համա-
րենք իւրաքանչիւր գրքից մի մի գլուխ թարգ-
մանել:

Ս. Ս.

Ս Է Ր.

(Jeunesse-ից)

Սի հմուտ և համակրելի բժիշկի թէ-
պէա միշտ հանդիպել էր միայն դիակնացեալ-
ներին: Խոր հասկացել էր կենաց սրբու-
թիւնն ու վեհութիւնը. սա արտունջ է յայտ-
նելի թէ կենաց հետ հէնց սկզբից վարվում
ենք խիստ անփոյթ կերպով: Նա պնդում էր,
թէ մենք աւելի անդեակ ենք ընտանի կեն-
դանիներ կրթելու, քան մանուկներ դաս-
տիարակելու: Բժիշկի խօսքը շատ անգամ
մտքիս մէջ է եկել, երբ որ սիրոյ մասին եմ
մտածել: Եթէ, կեանքի մէջ մուտք գործողներին
հարկաւոր էրարի խորհուրդներ տալ, ամէնից

առաջ պէտք է սիրոյ մասին խրատել: Այս
խնդիրը ամէնքը համարել են անտանելի և
անհաճելի: Դաստիարակիչները այդ բանի հա-
մար աւելի ձեռնհաս են համարում ծնող-
ներին, իսկ ծնողներն էլ այդ պատիւը տալիս
են առաւելապէս դաստիարակիչներին: Ուստի
և շատ անգամ երկու կողմից էլ գործը ան-
հոգութեան է մատնվում: Պատանիները ամե-
նափառագաւոր հասակի ձգնաժամին մնում են
առանց առաջնորդութեան: Բայց ոչ, ես սխալ-
վում եմ. ծնողներից և դաստիարակիչներից
այսպէս տարբեր կերպով ըմբռնած մանկա-
վարժական խնդիրը՝ լուծվում է առանց նոցա
գործակցութեան: Ինքնին: Մանկական հետա-
քըքրութիւնը եթէ ոչ այսօր, գէթ վաղն ան-
շուշտ կը լրացուի: Մի անպիտան բնկեր, մի
գիրք՝ որ այնքան շատ ձեռքէձեռք է անցնում,
անմեղ էակի աչքը բաց կանէ կենաց գաղա-
նիք կոշուածի համար: Այնուհետեւ նոր-
ընծայի երեակայութիւնն սկսում է սաստկու-
թեամբ գործել: Դէպի ծնողներն և դաստի-
արակիչները տածած հաւատարմութիւնն
սկսում է արագ քնջուիլ, իսկ այն անկոչ
դայեակների ազդեցութիւնն խիստ զօրանալ:
Մի անակնկալ նորութիւն և վտանգաւոր բան
է մանում կեանքի մէջ, որ յետոյ շատ
գժուար է լինում այն անդից դուրս խելը:

Մենք շօշափում ենք սիրոյ բարդ խնդրի
կարեւորագոյն, անառողջ և շփոթ հանգա-
մանքը: Թէպէտեւ գրում ենք պատանիների
համար, բայց հարկադրուած ենք սիրոյ մա-
սին խօսել: Սերը իւր բազմաթիւ ճիւղառ-
րութիւններով սփռուած է կենաց ամբող-
ջութեան մէջ, և շատ անգամ անմեղ մանկան
ապագայ վարքը՝ հէնց այն բանից է հիւս-
վում, ինչ որ նա ականջ դնելով է լսել իրա հա-
մար տակաւին փակուած աշխարհի դռների
յետեւից: Սիրտս արիւնով է լցվում, ոչ այս
սրբազան և նուիրական գիտութիւնը ստա-
նում ենք առաւելապէս օտար օտոխներից և թէ
գայթակղիչ ապականութիւնը երկար ժամանակ
թերեւս ընդ միշտ՝ պղտորում է մեր հոգին
մինչդեռ այս գործում հարկաւոր է բանեց-
նել ամենայն զգուշութիւն: Հարկաւոր է
մայրական խմաստութեամբ գործել, որպէս զի
մեր սիրելիները չկորչեն:

Միայն հարեանցի ակնարկելով մանկական հասակը ուզում եմ խնդիրը քննել աւելի բուն կողմից:

Ինչպէս պէտք է վարուի սիրոյ հանգամանքում ամուրի եւ նշանած երիտասարդը:

Նախ և առաջ հարկաւոր է, որ նա ընդելացած լինի կեանքը յարգելու զգացման, ծանաչէ անոր սրբութիւնն ու գերիշխանական նշանակութիւնը ուրեմն և այն պարտքերը որ մենք պէտք է կատարենք որպէս կենաց ժառանգորդներ: Մարդկային վարքը առաջնորդող հիմնական զգացում պէտք է լինի այրական արժանաւորութեան, տղամարդութեան զգացում: Եթէ, նա ունի այդպիսի զգացում, նորա աչքում կեանքը հասարակաց բարիք կը լինի, և ոչ թէ անձնական քմահաճոյք, և իւր անձի մէջ իսկ կը դանել այն ազնիւ և զօրաւոր զաշնակիցը, որ իրա պահպանիչ և ուղղիչ կը լինի:

Հասկանալի է, որ տղամարդութեան զգացումն ու ինքն իրան յարգելու արամադրութիւնը կարող է զարգանալ և ունենալ հազար տեսակ երկրորդական հանգամանքներ: Այն հասակում երբ որ սկսում է զարթնել հեշտութեան զգայութիւնը, երբ որ այդպիսի զգայութեան նոյն իսկ նորութիւնն ու անհանգստութիւնը խիստ վտանգաւոր է դառնում փորձանքը կարելի է և՛ թուլացնել, և զօրացնել: Այստեղ կենցաղը անուշիկ ու միջավայրը այնքան նշանաւոր հանգամանք է դառնում, ինչքան որ է մարդկային բնութիւնը: Զաւարանց մտաւոր աշխատութիւնից, նստական կեանքից, փնաստկար գրքերից, պարապութիւնից՝ նոր յուզումը կարող է դառնալ խիստ տանջող և անդիմադրելի ցանկութիւն, որ ներհակ պայմաններում կարելի էր խաղաղացնել: Առողջարար կենցաղը, գործունեայ սովորութիւնները, զուարճութիւնները, ֆիզիքական աշխատութիւնը այնքան օգտակար են, որ այդ հնարներով ձգնաժամի տարիները ընթանում են գրեթէ աննշմարելի կերպով: Մարդ պէտք է կանոնաւոր կեանք վարէ. եթէ դուք խանգարէք նորա հասարակչութիւնը, դուք կը խանգարէք նաև նորա վարքը:

Շատ կարեւոր հանգամանք է նմանապէս

թէ ինչ զապափար ունինք կենաց մասին: Թէ ինչպէս ենք հասկանում անոր նշանակութիւնն ու նպատակը: Այս վախճանով հարկաւոր է, որ պատանկութեան ժամանակ մենք յարգենք մեր անձը: Բարձր իղէտը, ազնիւութեամբ վերաբերուիլը կեանքի ամէն կողմերին, զիտենալ թէ որքան վսեմ է մեր այնտեղ կատարելիք դերը — ասոնք ամէնքը ապահովապէս կարող են առաջնորդել մեզ սիրոյ գործում և պահպանել այնպիսի սովորութիւններից և մտքի խորհուրդներից, որ փացած մարդիկ չեն զլանում շոտիկ մեր առաջ: Երիտասարդի կեանքում հազիւ թէ ուրիշ որևէ կողմից այնքան անհեթեթութիւններ և մոլեկան սկզբունքներ պատահին, քան այս կողմից: Փիզիքական անդիմադրելի պահանջի անունով՝ պատանկներին քարոզում են չզբաւել անձը և ընթանալ տենչի համեմատ: ասում են, թէ այսպէս վարուիլը — լաւ է, հակառակ վարուիլը — յիմարութիւն է և վատ է: «Այն երկրում, ուր որ 20 տարեկան երիտասարդի կուսութիւնը աւանդաբար և ազգովին ծաղրի է ենթարկւում» — պէտք է սովորական անձի մէջ պատրաստ ունենալ մի հաստատուն հակաշիւթ այդպիսի գարշութեան դէմ: Ես այնչէք մեր ջահիլներին բացի իրանց մատաղ զօրութեան պահպանութիւնից՝ ուրիշ ոչինչ պէտք չունին:

Այն անյաղթելի համարում քնական պահանջը, որի մասին այնքան ազմուկ են հանում և ականջ իլացնում գոյութիւն ունի միայն երեակայութեան մէջ, որ տաքանում է վատ գրքերի խօսակցութիւնների և օրինակների ազդեցութիւններից: Բայց ասեմք, թէ այդ կարիքը մի իրականութիւն է: Հենց այդպիսի դէպքում էլ մենք պարտաւոր ենք յարգել մեր բնութիւնը իւր ամբողջութեամբ, իւր ազնիւ բնազգումների և բարձր պահանջների բոլոր արտայայտութիւնների ժամանակ: Մեր ամէն մի գործ, ամէն մի վարմունք, որով թուլանում է մեր յարգութիւնը դէպի մեր անձը և դէպի ուրիշները, որոնք արտաւարում են մեր պատիւը — չար և վատթար են մինչև իսկ եթէ ծագում լինին մեր օրինական կամ բնական թելադրութիւնից: Բանի հազար բաներ կան, որ խեղապէս չնչին են, բայց որոնցից մենք

պէտք է հրաժարուինք՝ ապա թէ ոչ խիստ ծանր կը տաւ ինքնք։ Հասարակաց գործերում մասնակցողը՝ շատ անգամ ամառում է մտածել իւր հանգստեան կամ ծաշ ուտելու մասին։ Թէպէտ այդ գործերի անվիճելի իրաւունք ունիւ իդէալ տակաւնութիւն և կեանքի սկզբունք ունեցող մարդը՝ ուրիշներից տարբերութիւն է իւր վերաբերութեամբ դէպի կեանքը։ Գէպի իւր անձի զանազան պահանջները այն ևս կանխատեսութեամբ և հաստատամտութեամբ որով նա գիտէ մինը հպատակեցնել մի սին։ Ահա այս պատճառով ևս իբրեւ սկզբունք եմ հրատարակում թէ սիրոյ մէջ ամենից առաջ հարկաւոր է իդէալ որովհետեւ այդ իդէալը կօդնէ մեզ կառավարել մեր անձը։ Ով որ զնահատում է իւր կեանքը իւր անձի և ուրիշի արժանիքը՝ նա գերի չի դառնայ իւր ցանկութիւնների որովհետեւ նա չի ուզենայ ուրանալ իւր աղիւ թեւադրութիւնները լոկ միայն մարմնին ծառայելու համար։ Նա ուրիշն այդ ցանկութիւնների օրինականութիւնը ծանաչելով անգամ սիրով կը զոհէ նոյնը իւր բարձրագոյն բնութեան մաքուր սիրոյն և կուսութեան։

Կուսութիւնը շատ խնամքներ ունի։ Նա չեմ խօսում անտառների և ծաղրածուների մասին։ Գործ մեր խնդրում համարում չունին։ Աւելի փառագաւոր են բարեք կենաց մասին տարածումը դադարեցնելը։ Ամենից առաջ մենք պէտք է պատասխանենք այն լուրջ համարումը նկատողութեան։ Իբր թէ չափազանց ժուժկալութիւնը խտակրօնութիւնը— փառագաւոր է առողջութեան համար։ Չեզ պապանձեցնում են այս խօսքով թէ անմեղ հրեշտակ դառնալ ուզողը՝ առաջ խոտ ուտող անասուն պիտի դառնայ (qui veut faire l'ange, fait la bête)։ Այս հին առածը ամսմը ձգտարիւ է։ Բայց մենք չուտով կը տեսնենք որ մենք չենք էլ պահանջում որ հրեշտակներ դառնանք։ Չար հրեշտակները աղմի մէջ ընկան ոչ այն պատճառով որ խիստ բարձր էին ուզում թռչել այլ որովհետեւ հենց ի սկզբանէ խիստ ցածր թռչել սկսեցին։ Յանկութեանց գերի դառնալու լուազոյն միջոցն է — ոչ թէ իշխել անոնց վերայ այլ անոնց հպատակ դառնալ։ Ով որ վստական կուսակրօնութեան գէտ

է խօսում թող չմտանայ թէ որքան մարդիկ ապականուել են միայն այն պատճառով որ այլ օրէնք չեն ծանաչել։ Բայց եթէ խրեանց ցանկութիւնը։ Եւ ևս բնարութեան մէջ չեմ տատանուի եթէ բնարութիւն անելու լինեմ չափազանց սանձարձակութեան և չափազանց զսպութեան մէջ։ Ես աւելի կը գերադասեմ վերջինը որովհետեւ այստեղ աւելի պակաս է զոհուում մարդկային արժէքը։

Եամենայն դէպս ես չեմ քարոզում կուսակրօնութիւն և հերոսութիւն։ Երբ որ խօսում եմ կուսութեան մասին։ Նա չեմ պահանջում որ արհամարհուի մարդկային բնութիւնը յախուսն կերպով այլ որ այն յարգուի և պահպանուի։ Ինչ որ մենք ասացինք այն շօշափում է խնդրի միայն բացասական և չոր ու ցամաք կողմը։ Ետեւոր միայն այդքանով են վերջացնում։ Դարեր և ազգեր զրադուել են այդ խնդրով և ելք չեն գտել։ Մարդիկ յայտնում են ծայրայեղ մտքեր միմեանց աւելի զրգռելու համար։ Նախորդների պէս մեր արդի հասարակութիւնն էլ զերծ չմնաց այս օրէնքից։ Հասարակութիւնը սիրոյ մասին խօսում է կամ թեթեւամտութեամբ կամ պաճու ձեւով պարկեշտութեամբ որով միանգամայն ապականուած և անգութ է հանդիսանում։ Եւ պատգն էլ յայտնի է։ Մի հասարակութիւն որ երկատարգներին թողնում է և խորհուրդ է տալիս անձնատուր լինել բնազդութեանը, սանակոխ է անում սկրք։ Հետեւապէս սկսն էլ համարվում է ստոր և ցած բան։ Այսպիսիների ապականութիւնից ոչնչով պակաս չէ մի աների երեսանց խտակրօնութիւնն ու ճգնաւորականութիւնը ուստի և այսպիսի հակամիտութիւնների պղտոր խտանումը ից ծագում է կեղծ բարեպաշտութիւնը։ Տարախ ֆր— ճգնաւոր է յարտաբուս և շամբուշ է կուսութեամբ։

Աւանդ այսպիսի մոլորութիւններից խտխտում են հասարակութեան հիմքերը։ սկզբունքներն ու հաստատութիւնները որ և ներդրածում է ամէն տեղ և ամէն բանի մէջ։ Եթէ գուք սիրոյ գէտ մեղանջում էք երկատարգութեան ժամանակ հետեւեք կը յայտնուի ամբողջ ազգի մէջ անթիւ անհատ

մար թշուառութիւններով և դժբախտութիւններով:

Պեղում եմ, թէ կեանքի կանոնը պիտի ինի կուսութիւնը: Անոր ամէն մէկ խախտումը — յանցանք է: Որքան որ խիստ թուի այս օրէնքը — այլ օրէնք չկայ: Արտաքոյ այս օրինաց ուրիշ ամենայն բարոյախօսութիւն մաշուած խրատ է: Արդարամիտ և ազնիւ լինելն էլ հեշտ բան չէ, բայց միթէ այս բանից հետեւում է, թէ ուրեմն ստախօսութիւնն ու գողութիւնը ներելի է: Ով որ ինքն իրա դէմ մեղանշել է և սիրոյ վերաբերութեամբ դայթակղուել է, թող հասկանայ և խոստովանի, որ չարութիւն է գործել: Բարոյական գայթակղութիւնների ժամանակ միակ փրկութիւնը այսպիսի գիտակցութիւնն է: Իսկ չարութիւնը բարութիւն կոչել այն պաշտօնով, որ դժուարին է չարութիւնից զերծ մնալ: այս նշանակում է զանց առնել բարոյականութեան օրէնքները և խաբել իւր անձի խղճամտանքը:

*
* *

Սկզբունքը խոստովանելուց յետոյ, մենք այժմ պէտք է մտնենք պատանիների կեանքի մէջ, ուր որ նոքա փորձում են աղ սկզբունքը իրագործել: Մենք այստեղ ամենահամակրելի մաքառման վկայ կը լինինք: Բարոյական տեսակետից նայելով՝ աւելի սքանչելի տեսարան չի կարող լինի: Ֆրանսիայի բարբերը, ուր որ իսկական նշանադրութիւն գոյութիւն չունի, շատ դժուարացնում են երիտասարդի դրութիւնը մինչև ամուսնանալ... Այս տեղից ծագում են չարաչար խղճահարութիւններ, անկումներ, հերոսական կռիւնքներ, վերին աստիճան բանաստեղծական բանագործութիւն: Այսպէս է ասում Պրիւգոմը մի երգարան քննադատելիս: Ապա շարունակում է. «կարգալով այս ոտանաւորները, որ համեօտ՝ բայց անկեղծ կերպով նկարագրում են 20-ամեայ հասակի մաքառումն ու չարչարանքները, շատերի հոգու մէջ կը բացուին հին վերքերը... Մենք չենք կարողանայ անտարբերութեամբ տեսնել նորա (պատանու) կրած տանջանքները... Այլ, կոծեալ ծովի եզրից մենք կարկառում ենք նորան օգնութեան ձեռք»:

Այս պատկազմի ընդարձակութեան չափը կախում է մարդու բնուորութիւնից և խոտնուածքից: Կան արտօնեալ էականորոնք իրանց ինքնարոյս աղնութեամբ զգուսթիւն են զգում ցած և անարգ բաներից: Զարութիւնը այդպիսիներին չի դիպում: Բայց ուրիշները, այն ևս առաւելապէս շաւաղոյնները, ի բնէ սգորմելի վիճակի մէջ են գրում իրանց դիւրագրգռութեան, ծննդական երեակայութեան և մի ս բոլոր յատկութիւնների պատճառով: Առաջինները ձգնաւորի ոգի ունին, որ կարող է մարմնի ազատանութիւնից վեր պանալ երկրորդները բանաստեղծի ոգի ունին, ուր որ թագաւորում են «ձեւը և գեղեցկութիւնը», սոցա սիրտը աւելի է բորբոքվում սքսաւելի շատ և աւելի յաճախ կը տանջուին, բայց ոյժ չեն ունենայ կիրքը յաղթահարելու:

Սակայն մենք պէտք է ի մօտոյ տեսնենք մաքառումը: Այդ այն մաքառումն է, որից ոչ ոք չի ազատվում, բայց բանն այն չէ, որ մաքառման մէջ միշտ զօրեղ լինինք մեր ոտից, այլ որ երբէք չնահանջենք: Կենսական իմաստութեան հոյակապ գրքի մէջ մի գլուխ կայ, ուր ասում է, թէ ով որ ընկնի պէտք է վեր կենայ, որ ոչ նուազ կարեւոր է քան որ խրատում է, թէ զգոյշ եղէք, որպէս զի չընկնէք: Մարդ պէտք է կատարեալ արարած լինի, որ կեանքի ճանապարհն ընթանայ երբէք խղճի խայթ չզգալով: Իսկ մենք այդքան կատարեալ չենք: Ապա ուրեմն պատրաստ լինինք խաւար ժամերի համար, երբ որ տեսողութիւնը թուլանում է, մաքառումն անհաւասար է դառնում, ոյժերն սկսում են նուաղիլ և յուսահատութիւն տիրել: Թերեւս անկումն է պատրաստվում: Այս ամենաանաւանելի և վտանգաւոր ժամեր են: Սակայն ինչ էլ լինի, ընկածը տակաւին չի մեռել, նա միայն վիրաւորուել է, կամ թերեւ լոկ միայն սայթաքուել է: Բանն այն է, որ նա պառկած չը մնայ այն տեղում, ուր որ ընկած է, չկորցնէ յոյսը և մանաւանդ չզուաճանէ իւր նպատակին: Թող իւր իղէալը անդաւաճանելի մնայ: Թող վաղ թէ ուշ մաքառումից յաղթող ելլելու յոյսը իրանից չխախտի: Թող որ չարիքը անկեղծութեամբ չարիք կոչուի և գայթակղուողը խոստովանէ այդ:

Հարկաւոր չեն ստիպատութիւններ, հարկաւոր չէ ստութիւն և կեղծութիւն:

Այսպիսի հանգամանքներում պէտք է փորձառու և վստահելի բարեկամներ հանդէս գան: Շատ վտանգաւոր բան է, եթէ ուղղամիտ և սրտով մաքուր երիտասարդը սկսէ յուսահատուիլ և առել իւր անձը, մի որ և է պարտութիւն ստանալուց յետոյ: Եկէք ոտքի կանգնեցնենք նորան, քաջալերենք, բարեկամութեան մէջք ու թիկունք դառնանք:

Բայց, աւելոյ այս բանի հոգսը ով է քաշում: Հասարակութեան վերաբերութիւնը դէպի երիտասարդութիւնը դատապարտելի չափով անհետեւական է: Երան տալիս են վատ օրինակի նորան հալածում են մոլորութեան համար, նորան աւելի ևս ցեխի մէջ են գլորում, երբ որ նա ընկնում է, և ուրիշ ոչինչ չեն անում: Երան երբեմն երես տալով, երբեմն ամենայն բռնութեամբ հալածելով մենք այնպիսի գութ չենք ունենում, որ ոտքի է կանգնեցնում և բժշկում է, և մեզանից միայն շատ սակաւները այնքան արդար ոգորմածութիւն են ունենում, որ կարողանում են առել չարութիւնը, բայց սիրել չարութիւնից վարակուածին: Միթէ կեանքի մեծ մասը չի՞ ընծայվում սխալների ուղղութեան: Հաւազոյն բանակն այն չէ, որ երբեք պարտութիւն չի կրել, մենք տակաւին չգիտենք, թէ այդպիսի բանակը ինչպէս կը վարուի, եթէ մի օր ջարդ ստանայ: Կարողանալ պարտութիւնը տանել, նահանջը ապահովեցնել, ոյժերով նորոգուիլ, կորուստները լրացնել, վերքերը կալանդել, վհատածներին սիրտ տալ և կռուի մէջ նոր եռանդով մտնել — ահա քաջութեան բարձրագոյն ապացոյցները: Դակ եթէ փարիսեցիներից մէկն ասէ, թէ կարող է պարծենալ իւր կանխատեսութիւններով և խոհեմութեամբ — ես կը յիշէի մեր Տէր Յիսուսին, որ խիստ և միանգամայն բարեխիտ էր, որ աւետարանում էր ներողամտութիւն, դատապարտելով մեղանշութիւնը և թողութիւն տալով մեղաւորին, և կը կրկնէի նորա խօսքը, թէ անմեղն ի ծէնջ, նախ՛ նա ընկեցէ քար ի վերայ դորա:

Բայց ժամանակ է, որ թողնենք այս նախադուռը և մտնենք աղետալացած սիրոյ սահմանները: Յանուն այդպիսի սիրոյ և որպէս զի արժանի լինինք անոր, մենք յայտնում ենք անողոր պատերազմ ամէն բանին, ինչ որ կարող է խաւարեցնել նոյնը կամ բիծ գնել անոր վերայ: Միայն ճշմարիտ սէրը կարող է փրկել մարդուն: Այդպիսի սիրոյ համար պիտի պատրաստուի երիտասարդութիւնը, որին և հետամուտ պէտք է լինի ամենայն վսեմ և սուրբ հանգամանքներում: Միով բանիւ, ես քարոզում եմ կուսութիւն, բայց ոչ թէ ներքինիների կուսութիւն, այլ ազամարդու կուսութիւն: Մեծ նշանակութիւն չեմ տալիս լոկ արտաքին և բացասական կուսութեան: Ծշմարիտ կուսութիւնը նոյնչափ հոգու կուսութիւն է, որչափ և — մարմին: Դատարկ սիրտը չի կարող կուսական սիրտ լինել, կնոջ իդէալը պէտք է սրտի մէջ արժանաւոր տեղ բռնէ:

Յարգել կնոջ — նշանակում է անծի յարգութիւնը լրացնել: Կեանքը ամէն տեղ երկու տարերքի միադրութիւնից է կազմվում: Ասես թէ մի կատարեալ էակ բաժանուել է երկու մասի, որոնցից իւրաքանչիւրը ընդունակ չէ բաժանուած կեանքով ապրելու, և ուրեմն միշտ պէտք է իրար ձգեն, որպէս զի փոխադարձաբար լրացնեն և միութիւնը վերահաստատեն: Այս ձգողական զօրութիւնը աւելի լայն է սփռվում, քան առժամանակեայ մարմնական գոհացման նեղ սահմանը: Այս խորհրդաւոր զօրութիւնը, որ այր մարդուն մերձեցնում է դէպի կնոջ, յաւերժ կանաչիւթիւնն է: Որպէս զի յարգենք մասնաւորապէս այս կամ այն իրական կնոջ, նախ և առաջ մեր մէջ պէտք է ծնուի յարգութիւն դէպի ընդհանրական կանացիութիւն: Հոգին պէտք է առաջ յարգուի, քան մարմինը: Սիրոյ խնդիրը ճիշդ այն պայմաններն ունի, ինչպէս և միւս խնդիրներից շատերը, որոնցով որ հրապուրվում և հետաքրքրվում է երիտասարդութիւնը, այսինքն սէրը ծագում է ընդհանուր — հասարակ զգացմամբ և ապա կենդրոնանում է մի առարկայի վերայ: Ինչպէս որ կեանք մտնելիս՝ պատանին հետաքրքրվում է ամէն բանով, համակրում

է ամէն բանիս և ապա սակաւ առ սակաւ իւր ուշքը կենդրոնացնում է բացառիկ առարկաների վերայ: այնպէս էլ նորա սերը սկզբում հանրական բնութիւն ունի: Առաջ մեր սերը չի վերաբերվում մի որ և է կնոջ և ոչ մանուսանդ շատերին: որ բարձր ապականութեան ժամանակ է յայտնվում և բարոյական ու փիլիսոփայական տափաճութեան արդիւնք է լինում: սկզբում մենք պաշտում ենք կնոջ կամ աւելի ճիշդ կը լինի ասել զգում ենք անվկանդ: քայցր—բայց փսեմ և յափշտակուած զգացմունք: որ իրօք պիտի կոչուի կնոջ աստուածացում: Կնոջ աստուածացումը—այս է սիրոյ սկիզբը և աղբիւր: աստուածացումը պէտք է կանխէ սերին: ապա կցարդէ և վերջապէս շարունակ զուգընթանայ մինչև կենաց վախճանը:

* *

Բայց այսքանով չեմ վերջացնում: Բացի կնոջ իդէալից, մենք ուզում ենք, որ պատանիները հնարաւորութիւն ունենան ծանաչել իրական կնոջ: Մենք չենք կամենում, որ կիներ երիտասարդից հեռացրած, ծածկուած, փակուած լինի և արգելիալ պառչի փտանգաւոր հրապուրով զգեցուի: Ընդհակառակ դոքա պէտք է որչափ կարելի է յաճախ հանգիպին, որպէս զի իրար յաւ ծանաչեն: Այս կողմից մեր հասարակութիւնը միծ սխալ է գործում: Մենք ոչ միայն չենք քաջալերում կնոջ իդէալական աստուածացումը, այլ ամէն հնարներով հեռացնում ենք երկու սեռը իրարից և արգելք ենք դնում, որ իրօք ծանաչեն իրար ինչպէս հարկն է: Այս ահագին չարիք է: Այս ընթացքով միթէ հնարաւոր է խուսափել սիրոյ թեթեւամտութիւններից: Միթէ այսպէս չի տարածվում երիտասարդութեան մէջ կնոջ առեղծութիւնը—հասարակաց այն մեծագոյն թշուառութիւնը, որով երիտասարդութիւնը ծանաչելու հնար է ունենում միմիայն անպատիւ կանանց հասարակութիւնը:

Երկու սեռի երիտասարդութիւնը ստեղծուած է, որպէս զի իրար հետ տեսնուին, խորհրդածութիւններ փոխանակեն: Նոցա համար հարկաւոր են ընդհանուր զուար-

ծութիւններ և զրօսանքներ, ի հարկէ ծնող-նոյների հսկողութեամբ և այն զզուշութիւնները բանեցնելով, որոնք անհրաժեշտ են մեզ պէս հասարակութեան համար: Մեր այժմեան կեանքը երիտասարդութիւնից խել է բոլոր մաքուր ուրախութիւնները: Երիտասարդութիւնը կարօտ է մտերմութեան, զուարթամիտ և արժանայարգ կանանց հետ մտքերի փոխխոսութեան, անխորդախ խնդութեան՝ մասնակցութեամբ հասակակից օրիորդների: Չփչացած և անժամանակ չթառամած երիտասարդի այս մարդկային պահանջը աւելի զօրեղ է, քան մարմնական տափանքը, որի մասին զրարանութիւններ շատ ենք լսում:

Այո՛, այս մոլար խարխափական կենաց մէջ, ուր որ ապրում է երիտասարդութիւնը, մեզ հարկաւոր են լուսամիտ մարդկանց բարեկամութիւն, քաղցրութիւն, զուարթութիւն, մի լոյս՝ որ կարողանար ցրուել մեր մտքերի վերայ նստած ստուերները, մի քաջալերող զէմք, որ փարատէ մեր տխուր և վատ մտածողութիւնները: Մարդու մէջ կայ սիրտ, բայց ափսոս, որ այս բանը ոչ ոք չի ուզում տեսնել: Միթէ զարմանա՞նք, որ սիրաւ ձրգտում է արգելած ծանապարհներով զոհացում փնտուել, երբ որ կիները փակուած են: Բայց աւա՛ղ, արգելուած ծանապարհումն էլ զուր ենք փնտռում: մենք չենք դանում մեր ըզձացածը, ամենայն ինչ պատրանք է և զղուռութիւն, և ուշ ենք հասկանում, թէ թեթեւամիտ սերը միըւամ է, անապատի օդապատկեր է, վաղուց հանգած ասպի մնացորդ ցոլացումն է:

* *

Մեր անկարգ կենաց պատճառով մենք կարցրել ենք զիւթական և գեղեցկութեան աշխարհը, որ ես կը կոչեմ սիրոյ արշալոյս: Կայ մի աշխարհակողմ, ուր որ արեգակ է ծագում, որի ճառագայթների զօրութեամբ ծաղիկներ են բացվում, ուր որ երկիրը դեռ ես անկոխ է մարդկանց ոտքերից և ոչ մի բանից չապականուած՝ մաքուր և կուսական է: Այն տեղ կրում են զգացման միայն քաղցրութիւնը, զաղափար չունենալով անոր դառնութեան մասին և թէ որքան խոր է անոր

պատճառած տանջանքը: Սէրը լաւ բան է նաեւ այն ժամանակի երբ որ նոյն իսկ արցունքներ է թափել տալիս մանուանդ, որ սիրոյ մէջ չպէտք է վախենալ ոչ արցունքից, ոչ տրտմութիւնից: Բայց այն երկրում, ուր որ արեգակ է փայլում արցունք չգիտեն: Այն է մեր կենաց նախագաւթիթը, լուսաւոր դրախտը, որոնց բնակիչները բախտաւոր են, գիտենալով որ կենդանի են, որ տեսնում են իրար, որ կարողանում են հեռուից իրար պաշտել շատ անգամ լուռ և մունջ և ուրիշ աւելի պահանջ չունենալով: Մինք փակել ենք այդ դրախտի դռները: Առանց սիրոյ երիտասարդութիւնը՝ նոյն է թէ առաւօտ առանց արեւի: Եթէ մեր երիտասարդութիւնն այնպէս մոայլ է՝ պատճառն այն է, որ սէրն այլ ևս հաւատ չի ազգում: Երիտասարդների ճանապարհը՝ սէրից հեռացնող ճանապարհ է: Կենանքն էլ հրաժարվում է այնպիսիներից, որոնք պղտորում են կենաց աղբիւրը: Մոքա էլ չեն տեսնի սէրը իւր յաղթ գեղեցկութեան կատարելութեան մէջ: Ոչ երկնքի կապոյտը, ոչ ծաղիկները, ոչ կարկաչին վտակը չեն բաց անի նոցա առաջ իւրեանց խորհուրդը: Մոքա իրանց մերժուած են զգում՝ կեանքից — իսկ աւելի զարհուրելի բանադրութիւն՝ չի կարող լինել: Իրանց թառամած հոգուն՝ ամբողջ աշխարհքը թառամած է թուում:— Բայց ով որ ինքն իրան յարգում է, նա միայն ունենում է մեծագոյն խընդութիւններ, որ յայտնի չեն միւսներին: Մորա երակներում հոսում է առողջ և զօրեղ կեանք, ինչպէս հիւթը կաղնու բնի մէջ, և իւր մատաղ կրծքի մէջ ուրախութեամբ է թնդում ամբողջ աշխարհը: Աշխարհի բոլոր մաշուած կեանքերը չեն հաւասարի նորա կենաց մի ժամին:

Սիրոյ երկուորեակն է — պատանեկան յափրշտակութիւնը, որ աճում և նուազում է սիրոյ հետ ի միասին: Ինչ չափով որ սիրոյ ընդունակութիւնն է թուլանում և սիրոյ յատկութիւնն է ցածանում, այն չափով մեր յափրշտակութիւնն էլ թուլանում և փոխվում է: Պաշտած սէրը աղբիւր է ոչ միայն բանաստեղծութեան, ուրախութեան, ոգևորութեան, այլ և զօրութեան և արիւթեան: Ուրեմն առաքինութեան զաղանիքը նա ունի ով որ

արիւթեամբ կուսութիւն է պահպանում: Գեղեցկութեան և հաւատարմութեան աշխարհում է զօրանում առաքինութիւնը, որով մարգու սիրտը հաստատ և անդրդուելի է դառնում աչքը պարզվում է և ձեռքը ընդունակութիւն է ստանում ազդու հարուածներ տալու: Անշուշտ ամենամեծ պարգև է զօրութեան այսպիսի կենդրոնացումը, անձնական արժանեաց այս գիտակցութիւնը:

Բայց միթէ չպէտք է յիշենք և միւս պարգևը, որ մարմնով առողջ և սրտով մաքուր տղամարդը ստանում է իւր ընտրած հարսնացուի հետ լծակից դառնալով: Նա միշտ պէտք է գիտենայ այն պատասխանատուութիւնը, որ իւր վերայ կը ծանրանայ, երբ որ դառնայ ընտանեաց գլուխ, ամուսնու պաշտպան և զաւակաց հայր: Աղտոտել կենաց աղբիւրը, տալ զաւակներին թերատ կեանք, վտիտ մարմին, մաշուած հոգի — ահա այն մեղքը, որ աւելի կը խայթէր իմ խիղճը, քան Աստուծոյ արեւի տակ կատարուող միւս բոլոր մեղքերը:



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

ՕՒՍՆ ՕԾՆԵԼԻՔ.

Ուսումի թագաւոր շատ խաստըցաւ, բոլոր կողեր զաւթեց, մեր խայռ տղգ էն յըմալ նեղութուն քաշեց էնդոց ձեռն օ իսկի չեղեր ա. տախտակ կծակեն, կընցուցեն խայռ վիզ, կեւլին տախտակի վրէն ու կեր ու խում կենեն:

Օխան Օծնելին էլ Մանգկերտու էրկիր առաջնորդ էր, զիշեր ու ցերեկ ուր աղգի յարով Ասուն աղօթք կէներ. — Եւ Աստուած,

1. Պատմել է Խրաբայ Փրիստո գիւղից Բրեքի Արեւշահ (Սարիբեկ): Գրի է առել Ս. Հայկունի: